

լին և պրոֆ. Մ. Ախունդովը: Նստաշրջանի նախագահիչ նիստում՝ հոկտեմբերի 6-ին, լսվեցին պրոֆ. Կ. Սուլթանովի, պրոֆ. Մ. Միրիանյանի, Երևանի պետական համալսարանի պրոֆ. Կ. Խաչատրյանի զեկուցումները՝ նվիրված անդրկովկասյան համալսարաններում կադրերի պատրաստման ու գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման դրվածքին և այդ խնդիրների հետ կապված հեռանկարներին:

Նստաշրջանի աշխատանքներն ամփոփելով, Աղբյուրյանի համալսարանի ռեկտոր Մ. Ալեկևյանը, որ ի մի բերելով եղբայրական հանրապետություններում կատարված գիտական աշխատանքները, նստաշրջանը միաժամանակ դարձավ հորելյանական տարվա լավագույն միջոցառումներից մեկը Անդրկովկասում՝ կրկին հավաստելով հարևան երեք ժողովուրդների ինտերնացիոնալիստական անխզելի դաշինքն ու փոխադարձ բարեկամությունը:

Խ. ՎԱՐԳԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱՆԱԲԱՆԱԿԱՆ VI ԿՈՆԳՐԵՍՈՐ

Սեպտեմբերի 6—13-ը Պրազայում տեղի ունեցավ հայկականների միջազգային VI կոնգրեսը, որը նախորդ կոնգրեսների հետ համեմատած ամենամեծն էր ինչպես մասնակիցների քանակով, այնպես էլ մասնակցող երկրների ընդգրկումով: Մասնակցող 51 երկրներից ներկայացված էր մոտ 700 զեկուցում, որոնցից միայն Սովետական Միությանից՝ 82 զեկուցում, ԱՄՆ-ից՝ 82, Զխոսլովակիայից՝ 129, Անգլիայից՝ 46, Ֆրանսիայից՝ 36:

Պրոֆ. Ավանեսովի ղեկավարած սովետական ղեկավարության բաղկացած էր 39 հոգուց և ներկայացնում էր Մոսկվայի, Լենինգրադի, Նովոսիբիրսկի, մերձբալթյան հանրապետությունների, Հայաստանի, Վրաստանի, Մոլդովիայի և Ուկրաինայի գիտական այն կենտրոնները, որոնք զբաղվում են խոսքի ուսումնասիրության հարցերով:

Կոնգրեսի հիմնական թեման էր՝ ակուստիկական ազդանշանը և նրա ընկալումը: Սակայն ներկայացված զեկուցումներից միայն 69 էին նվիրված կոնգրեսի հիմնական թեմային:

Հաշվի առնելով խոսքի ուսումնասիրության բազմակողմանիությունը, կոնգրեսի ծրագիրը բաժանված էր հետևյալ 4 հիմնական թեմաների խոսքի ֆիզիոլոգիան և պաթոլոգիան, ֆիզիկական ազդակը և ընկալումը, հնչյութաբանություն և լեզվաբանական հնչյունաբանություն, կենսաֆոնետիկա:

Բոլոր զեկուցումները համապատասխանորեն բաշխված էին տարբեր սեկցիաների, որոնք հիմնականում արտացոլում էին վերոհիշյալ թեմաները:

Պլենար նիստերում լսվեցին Դելատրի (Ֆրանսիա) «Ակուստիկականից դեպի տարբերակիչ հատկանիշները», Ֆանտի (Շվեդիա) «Հնչյուն, հնչյունի հատկանիշը և ընկալումը», Մ. Հալլեի (ԱՄՆ) «Սերող հնչյութաբանություն»,

Լ. Զիստովիչի «Որոշող կանոնների ուսումնասիրության մեթոդը խոսքի ընկալման ժամանակ և Ունգեհոյերի (ԳՖՀ) «Կոմունիկատիվ և արտակոմունիկատիվ մոտեցումը հնչյունաբանության մեջ զեկուցումները: Ամենից մեծ հետաքրքրություն էր ներկայացնում պրոֆ. Գ. Ֆանտի վերոհիշյալ զեկուցումը, որտեղ հեղինակը իր առջև դրել էր հնչյունների արտասանական յուրահատկությունների և նրանց ֆիզիկական հատկանիշների հարաբերակցությունը պարզելու խնդիրը:

Զեկուցողը լեզուն և խոսքը բաժանում է հետևյալ մակարդակների. լեզու՝ վերլուծություն, հնչյութ, հնչյութի հատկանիշ և խոսք՝ արտաբերում, խոսքի ալիք, ընկալում: Այս մակարդակները իրար զուգահեռ և համարժեք չեն, բայց կարևորը այն է, որ ըստ Ֆանտի՝ Ռ. Յակոբսոնի առաջադրված հնչյութների բաժանումը տարբերակիչ հատկանիշների հաճախ հաշվի չի առնում ակուստիկական ազդանշանը և նույնիսկ հակասում է նրան: Այսպես, օրինակ՝ ըստ Ռ. Յակոբսոնի մի ընդհանուր կոմպակտ դասում միանում են այնպիսի հնչյուններ, ինչպիսիք են [a] և [k] կամ [p], [t] և [i], [u] հնչյունները, միևնույն ակուստիկայի և ընկալման տեսակետից նրանք ամենահեռու հնչյուններն են, իսկ [i] և [y] հնչյունները, որոնց միջև ակուստիկական տարբերությունները ամենանվազն են, համարվում են ամենից ավելի հակադիր: Այստեղից պրոֆ. Ֆանտը հանգում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է տարբերել երկու տիպի հատկանիշներ՝ լեզվաբանական և ակուստիկական:

Որպես խոսքի ալիքի ուսումնասիրության հիմնական մեթոդ նա ընտրում է վերլուծությունը: համադրության միջոցով: Սինթեզատորը (համադրիչ) մեծ հաջողությամբ ցուցադրվեց կոնգրեսի մասնակիցներին հետևյալ օրը: Ի տարբերություն նախորդ սինթեզատորների, այս վեթ-

չինքն ունենալ շատ պարզ կառավարում և սինթեզում էր ոչ միայն անգլերենի և չվեդերենի ձայնավորներն ու բաղաձայնները, այլև հիմնական տոնը՝ խոսելով մի քանի ձայնով (տղամարդու տարբեր ձայներով և կանացի ձայնով)։

Բոլորովին այլ դիրքերից հնչույթների տարբերակիչ հատկանիշների տեսության քննադատությամբ հանդես եկավ պրոֆ. Զինգերը (Սովետական Միություն)։ Վերջինիս կարծիքով հնչույթի սահմանումը որպես տարբերակիչ հատկանիշների մի փունջ, կարելի է համարել բավարար միայն այն դեպքում, երբ հնչույթին վերադրենք միայն տարբերակման ֆունկցիա և գիտենք այն որպես համակարգի մի տարր (ի գեպ ասենք, որ լեզվաբաններից շատերը հենց այդպես էլ դիտում են հնչույթը)։ Երբ լեզուն դիտվում է իր գործառնության ժամանակ, այսինքն երբ այն դիտվում է որպես հաղորդակցման միջոց, անհրաժեշտ է հաշվի առնել նաև ոչ էական (ոչ ուղեկան) հատկանիշները։ Վերջիններս հաշվի չառնելը հանգեցնում է բառի կամ ձևույթի եթե ոչ լրիվ անճանաչելիությանը, ապա նրա ընկալման դժվարացմանը։ Այս վերջին դրույթը առաջացրեց լուրջ հակամատչություններ ունեցողների, հատկապես օտար երկրների սլավոնագետների կողմից, որոնք նշեցին, որ որոշ ոչ էական (ոչ ուղեկան) հատկանիշների աղավաղումը, որը տեղի է ունենում օտարախոսների մոտ, չի հանդիսանում լուրջ խոչընդոտ ընկալման կամ հաղորդակցման ժամանակ։

Տարբերակիչ հատկանիշների տեսության քննադատմանն էր նվիրված նաև պրոֆ. Գափրին-դաշվիլու (ՍՍՀՄ) զեկուցումը, որը կովկասյան մի քանի լեզուների ուսումնասիրություններից ելնելով, հանգել է տարբերակիչ հատկանիշների երկանդամության (բինար հակադրության) ըսկզբունքի ժխտմանը և առաջարկում է փոխարինել այն եռհատողական (տրիսոտոմիա) կամ քառհատողական հարաբերություններով։ Սակայն այս դրույթը համոզիչ չի թվում, քանի որ ամեն մի եռանդամ (կամ ավելի) հարաբերությունը կարելի է վերածել իրարից միայն մեկ հատկանիշով տարբերակվող երկանդամ հարաբերության։ Օրինակ, հայերենի համար բնորոշ եռանդամ բաղաձայնների շարքերը b-p-p', d-t-t', g-k-k' կարելի է ներկայացնել հետևյալ ձևով՝ b-p, p-p', d-t, t-t', g-k, k-k' և այլն։

Լուրջ վեճերի առարկա դարձավ հայտնի լեզվաբանական երևույթը՝ կցույթը (սանդիսի երեւույթը)։ Այս հարցի վերաբերյալ հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ չեխ գիտնական Վախեկը, որը լուրջ քննադատության ենթարկեց կցույթը առանձին հնչույթ համարելը և նշեց այդ երևույթի առաջացման պատմական պատ-

ճառը՝ իմաստի անտեսումը խոսքի վերլուծության ժամանակ։

Նույն պրոբլեմին էր նվիրված պրոֆ. Լիի (Անգլիա) զեկուցումը, նա շարադրեց իր կատարած փորձերի արդյունքը։ Փորձերում որպես նյութ նա վերցրել էր մի շարք զույգ բառակապակցություններ, որոնք արտասանական մակարդակում տարբերվում են իրարից միայն իրենց տարբեր կցույթով. օրինակ՝ that stuff (այդ կտորը) և that's tough (դա դժվար է), we cruise (մենք նավով երթնեկում ենք) և weak ruse (միամիտ խորամանկություն)։ Հայերենի համար կարելի է բերել մատիտը սո՛ւր է՞ և մատիտըս ո՞ւր է՞ օրինակը, որտեղ «ս»-ի նախորդ կամ հաջորդ բառի հետ կցվելը փոխում է կապակցության իմաստը։

Մի խումբ ուսանողների հանձնարարվում էր ընթերցել անգլերենի այս և նման բառակապակցությունները, իսկ մի ուրիշ խումբ ուսանողների առաջարկվում էր լսել և որոշել, թե եղած երկու բառակապակցություններից որն է արտասանված։ Հեղինակի փորձերի արդյունքները ցույց են տվել, որ ամբողջությամբ վերցրած՝ մոտավորապես 75 տոկոսի դեպքում բառակապակցությունները ճիշտ են ճանաչվում և որ ընկալման վրա ազդում են այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են այս կամ այն բառակապակցության հաճախականությունը, նրա սովոր կամ անսովոր լինելը և այլն։

Ակադ. Շչերբայի տեսության դիրքերից մոտեցավ պրոբլեմի մեկնաբանմանը Վ. Ա. Վասիլևը (ՍՍՀՄ), նշելով, որ կցույթի երևույթի մեջ արտահայտվում է այս կամ այն լեզվի բաղաձայնների ֆունկցիոնալ-արտասանական առանձնահատկությունը, այն է՝ բաղաձայնները լինում են ուժեղ վերջավորմամբ (ձայնավորից առաջ паг) և թույլ վերջավորմամբ (ձայնավորից հետո лан), և որ նման դեպքերում that stuff և that's tough (հմտ. մատիտո սուր է և մատիտոս ուր է) տարբերությունը այն է, որ առաջին դեպքում բաղաձայնը ուժեղ վերջավորմամբ է, իսկ երկրորդ դեպքում՝ ուժեղ սկզբնավորմամբ (այսինքն՝ ունի թույլ վերջավորություն)։

Զեկուցումներից շատերը նվիրված էին խոսքի պրոսոդիկ և դինամիկ հատկությունների հարցերի լուսաբանմանը՝ ինտոնացիա, տոն, շեշտ, տեղադրություն և խոսքի այլ ժամանակային բնութագրություններ։ Այդ հարցերի բազմակողմանի քննարկումով հանդես եկան ինչպես մեր, այնպես էլ արտասահմանյան երկրների գիտնականները։

Կոնգրեսում առաջին անգամ խոսք եղավ նաև հայոց լեզվի մասին։ ՇՀայերենի կիսաշփականների արտասանական առանձնահատկությունների

մասին՝ զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ լեզվի, լինստիտուտի ավագ գիտաշխատակից Ա. Խաչատրյանը:

Ելնելով կոնգրեսի հիմնական թեմայից՝ զեկուցումներից շատերը նվիրված էին կամ առնչվում էին ընկալման հարցերի հետ՝ ինչպես է կատարվում մեր ընկալումը արտասանական մակարդակում: Այդ հարցը դրվեց կոնգրեսի երկրորդ պլենար նիստում պրոֆ. Ջիստովիչի (ՍՍՀՄ) կողմից: Հայտնի էր, որ մինչև վերջերս պրոֆ. Ջիստովիչը ընդունում էր միայն վանկի ընկալման տեսությունը, որի համաձայն ընկալման նվազագույն միավորներն են համարվում վանկերը: Այժմ այդ տեսության մեջ նկատվում է զգալի փոփոխություն: Ջիստովիչի կարծիքով ընկալումը բազմաստիճան պրոցես է, որի առաջին փուլում կատարվում է խոսքի ակուստիկական հատկանիշների լսողական չափումը: Հաջորդ փուլում կատարվում է լսված չափումների հնչյունաբանական մեկնաբանումը: Որոշող կանոնները գտնելու համար հեղինակը առաջարկում է մի շարք փորձեր, որոնց նպատակն է որոշել հնչյունական միավորների սահմանները, այսինքն, այն սահմանները, որոնք ակուստիկական ազդանշանը բաժանում են հնչյունական կատեգորիաների: Ընդ որում, ինքը՝ փորձարկվողը, ակտիվորեն որոնում է այն օպտիմալ պարամետրերը, որոնք ամենից ավելի են համապատասխանում հնչյունական միավորներին: Զեկուցողը գտնում է, որ վանկի մեջ ամենաէական տեղեկությունը (ինֆորմացիան) գտնվում է մի հնչյունից մյուսին անցումի մեջ: Այսպիսով նա հնչյունը ընդունում է որպես միավոր:

Այդ նյութին վերաբերող զեկուցումներից հետաքրքիր էր նաև Ջ. Զափարիսի (ՍՍՀՄ) զեկուցումը, ըստ որում, զեկուցողը իր առջև դրել էր համարյա նույն խնդիրը՝ ընկալումը կատարվում է հնչյուններով, բառերով, թե՛ վանկերով: Որպես փորձառական նյութ նա վերցրել է մի շարք վրացերեն բառեր, որոնց մեջ որոշ հնչյունական պակասություններ փոխարինել էր սվաներենից վերցրած կոմպլեքսներով: Չնայած այն բանին, որ վրացերենում նույն հնչյունները կան, բայց հանդիպում են ոչ նույն դիրքերում, և այդ իսկ պատճառով հնչյունական կոմպլեքսների ընկալումը դժվարանում է: Այստեղից հեղինակը եզրակացնում է, որ ընկալվող էտալոններ են ոչ թե առանձին հնչյունները, այլ այն հնչյունա-

կան կոմպլեքսները, որոնք բնորոշ են տվյալ լեզվին:

Նույն հարցին էր նվիրված նաև պրոֆ. Արտյոմովի (ՍՍՀՄ) զեկուցումը՝ ակուստիկական ազդանշանը և նրա ընկալումը թեմայով: Պրոֆ. Արտյոմովը այդ հարցը դիտում է իր կողմից զարգացվող խոսքի կոմունիկատիվ տեսության հայեցակետից: Նա նշեց, որ անհրաժեշտ է խոստորեն տարբերել ազդանշանի ֆիզիկական հատկությունները և ընկալվող որակական միավորները: Խոսքի ակուստիկական միավորները ընկալվում են լեզվի համակարգում՝ հաշվի առնելով իմաստային բովանդակությունը և խոսքային վարքագիծը: Եվ չնայած հնչյունները հանդիսանում են տարբերակիչ հատկանիշների մի փունջ, բայց ընկալման համար անհրաժեշտ չէ բոլոր հատկանիշների միաժամանակյա առկայությունը: Հաճախ ընկալման համար բավարար է մեկ կամ մի քանի հատկանիշ:

Միևնույն թեմային էին նվիրված պրոֆ. Ֆրայի (Անգլիա), Լեբրանի (Ֆրանսիա) զեկուցումները, որոնք հաղորդեցին իրենց մի շարք փորձերի արդյունքները:

Զափազանց ուշագրավ էր պրոֆ. Օմիսուիի (Տոկիո) ֆիլմը, որտեղ ցուցադրվում էին խուլ-համբերին ուսուցանելու նոր մեթոդներ և վարժություններ: Վերջիններս շատ պարզ էին ու մատչելի և հիմնված էին փորձառական հնչյունաբանության մեթոդներով ստացված ճշգրիտ տվյալների վրա:

Քննարկվեցին նաև խոսքի արատների (բնածին, ինչպես նաև հոգեկան ծանր ապրումներից, վնասվածքներից ստացված), խոսքի ըմբռնելիության (կախված լսողի հոգնածությունից, արտաքին աղմուկից և այլ հանգամանքներից), ինչպես նաև շշուկով խոսքի ակուստիկական առանձնահատկությունների հարցերը:

Կոնգրեսում ներկայացված զեկուցումները պարզեցին, թե ինչ ուղղությամբ է ընթանում հնչյունաբանական միտքը և ինչ նոր մեթոդներ են կիրառվում խոսքի ուսումնասիրության մեջ:

Միաժամանակ կոնգրեսի նյութերը ցույց տեվեցին, որ փորձառական հնչյունաբանության կողմից զարգացված ուսումնասիրության ակուստիկական մեթոդները հաստատուն տեղ գրավելով շարահյուսության մեջ, տարածվում են նաև խոսքի բառապաշարի և ոճի վրա:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ